

Ահա ձեզ «Կաշառուած մամուլը».

Երբ հայոց թերթում
 Ներքող եմ կարգում
 Տըզրուկ աղալի անուան ու փողին,
 Իսկոյն իմ մըտքում
 Մի հարց է ծագում.
 «Թերթը ո՞րքան է ստանում տողին...»:

Իսկ «Հայկական բանակուրի» պատկերը այսպէս է նկարագրում պ. Մատուրեանը.

—Մի՛տք, իմաստ չը կայ ձեր գրուածներում...
 «Բայց դուք, ո՛վ պարոն, փաստե՛ր չէք բերում...
 —Փաստե՛ր էք ուզում. համեցէ՛ք, իսկոյն,—
 Ձեր քիթը մեծ է, ձեր դէմքը—ղեժգոյն,
 Սէքերնիդ՝ ակնոց, միրուքնիդ՝ երկար...
 Ըստ լօգիկայի՝ դուք շատ էք տըխմար...
 «Բայց դո՞ւք... ով պարոն, մի՞թէ կարող էք
 Ողջամիտ դատել, երբ գիշեր ցերեկ
 Թութուն էք քաշում—ձեր փոքրիկ քըթից
 Ծուխն է անպակաս, զուրկ էք և միրքից...
 Դո՛ւք էք տըխմարը՝ ըստ լօգիկայի,
 Եւ ընթերցողն էլ այդ կը վըկայի»...

Առակները թարգմանուած են Ֆյօրիանի, Լաշամբօղի, Գեյլերտի, Բատիսթօնի և այլն առակներից:

Առհասարակ հասարակական ցաւերի մօտով հանգիստ չէ կարողանում անցնել մեր բանաստեղծը և նրա «Գրչի հանաքները» տակ դժուար չէ նկատել վիշտ և թագուն արտասուք... Տխուր է և այն ժպիտը, որ երևում է գրքի չապկի վրայ նկարած աղջկայ երեսին: Ի դէպ, պ. Սուրէնեանցի նկարած այդ դուխը բաւական տարօրինակ է իր մեծութեամբ և մազերի խտութեամբ...

Կասկած չը կայ, որ այս շքեղ հրատարակուած գրքոյկը սիրով կ'ընդունի մեր ընթերցող հասարակութիւնը:

Լ. Ս.

28) ԲՃՊ. ՎԱՀԱՆ ԿՐԹՐՈՒՆԻ. «Վաս ցաւ» (պատկերազարդ),
 Թիֆլիս, 1901 թ., գինն է 6 կօպ.:

Այս գրքոյկը Պետերբուրգի հայ ուսանողութեան հրատարակութիւնն է և կազմում է բժպ. Վահան Արծրունու ձեռնարկած «Բժշկի գրոյցներ» սերիայի № 2: Գրքոյկը, յարգելի հեղինակի միւս հրատարակութիւնների նման, կազմուած է պարզ

և մատչելի լեզուով: 32 փոքրագիր երեսները մէջ ընթերցողը ստանում է ամփոփ տեղեկութիւն սիֆիլիս կամ «վատ ցաւ» հիւանդութեան մասին. նա խմանում է թէ ինչ բան է վատ ցաւը, ինչպէս են մարդիկ վարակւում այդ ցաւով, ինչպէս է սիֆիլիսը տարածւում գիւղերում, որոնք են վատ ցաւի նշանները, ինչպէս մարդ պիտի պահպանի իրան վատ ցաւից և, վերջապէս, թէ սիֆիլիսոտը երբ կարող է ամուսնանալ: Գրքը ոչլը զարգարուած է 8 հատ նկարներով, որոնք ներկայացնում են խոցեր մարմնի զանազան մասերում: Ափսոս որ նկարները այնքան էլ պարզ և աջողուած չեն: Ճանկալի էր, որ հեղինակը խօսելով վատ ցաւի նշանների մասին (երես 15), պարզէր պինդ շանկրի և փափուկ շանկրի տարբերութիւնը, այլապէս ընթերցողի հասկացողութեան մէջ վատ ցաւի նկատմամբ բաց տեղ է մնում:

«Վարակուելուց (այսինքն թոյնը մի տեղ դիպչելուց) մի քանի օր անցած, ասում է հեղինակը, այն տեղում, որտեղ թոյնը ընկել է, դուրս է գալիս ոսպի մեծութեամբ խոցիկ»: Այդ կարելի է ասել միայն փափուկ շանկրի մասին, իսկ պինդ շանկրը, որի հետևանք է սիֆիլիսը և որին պիտի վերաբերէր վերև բերած կտորը, ինչպէս յայտնի է, երևում է վարակուելուց 3—6 շաբաթ անց: Բայց դուցէ այդ տպագրական սխալ է: Ի՞նչ ասել կ'ուզի որ ժողովրդի մէջ այս գրքուկի տարածուելը շատ և շատ ցանկալի է:

Բժ. Գ. Ս.

29) ԱՆԿՐԱՆԻԿ. Տ(Գ)ԷՐՍԻՄ. Ճանապարհորդութիւն եւ «եղագրութիւն»: Հրատարակութիւն Քիֆիլիսի Հայոց Հրատարակչական Անկեթութեան. Քիֆիլիս, 1901. 237 եր. 80/, գինը 75 կոպէկ:

Էրզրումի, Դիարբէքիւրի և Սարբերդի մէջ տեղ բարձրացած է մի խորհրդաւոր լեռնաշխարհ, Դէրսիմը: Մինչև այժմ էլ նա մի անծանօթ երկիր է, մինչև այժմ էլ թիւրքաց իշխանութիւնը չէ հաստատուել այդ ազատ բարձրութիւնների վրայ, թէև շատ անգամ են թիւրք զօրքերը թնդանօթներով արշաւել այնտեղ ազատասէր դէրսիմցուն ընկճելու և Ստամբուլին հպատակեցնելու համար:

Սորհրդաւոր է Դէրսիմը իր անյայտութեամբ: Ի՞նչ կայ այդ անմատչելի բարձրութիւնների վրայ—չատերին չէ յայտնի, թէև եւրոպացի մի քանի ճանապարհորդներ (օր. Տէյլօր) աշխատել են, որքան հնարաւոր է, ուսումնասիրել այդ լեռնաստա-